

ձեզի որ նեղութենէն կ'երեւի մարդուն շաբարը վեր ելաւ:

- Ամերիկա գացիր, տղաքդ տեսար... ուրախացար... մաշալլահ համալսարան ալ աւարտեցին, մա՛րդ եղան... ի՞նչ կայ նեղանալու...» կը խորհրդածէր հիմա ընկերներէն մին:

Յովակիմ լուռ կը մնար իր մէջ կոտտացող ցաւին հետ:

Ի՞նչ պիտի պատմէր ընկերներուն... ինչպէ՞ս պիտի պատմէր... ի՞նչ երեսով պիտի ըսէր, որ իր անդրանիկ որդին իրմէ 25 տարի մեծ՝ չորս զաւակներով ամերիկացի կնոջ մը հետ ամուսնացած էր, կառավարական պսակ եղած, եւ հիմա օտարին զաւակները իրեն «կրենք» կը կանչէին:

Ի՞նչպէս պիտի պատմէր, որ տարիներու իր երազը խորտակուած էր հոգույն մէջ... չէ՞ որ տղաները մա՛րդ պիտի ըլլային օր մը, հայկական շերմիկ

բոյն մը պիտի կազմէին, թէկուզ սա նէիլէր Ամերիկային մէջ:

Ի՞նչպէ՞ս պիտի պատմէր որ Հայաստանի երազն անգամ չէր կրցած դրոշմել իր զաւակներուն սրտին մէջ:

Ի՞նչպէ՞ս պիտի պատմէր, որ զաւակներուն կիսատ-պոատ խօսած ուկեղնիկն անգամ՝ հիմա փոխարինուած էր անգլերէն լեզուով:

Ի՞նչպէ՞ս պիտի պատմէր, որ իր «Ծիրանի ծառ»ը չորցած էր օտար հողին վրայ:

Ցաւե՛ր... որոնք ամէն օր ժիշ մը աւելի կը ննշէին հայկականութեամբ տոգորուն իր սրտին վրայ:

Ու բանի մը օր ետք... Յովակիմի կինը վերադարձաւ Ամերիկային, հոգ տանելու իր կողակիցին:

Բայց... արդէն ուշ էր:

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿՈՐԱՆՔ

Ա. Զատկուան առիթով, շնորհաւորանքի գիրեր եւ հեռագրեր առաքուեցան Հոգեւոր ու Կառավարական պետերուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագրերը ստացած է Պատրիարք Սրբազն Հայրը.-

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ա. Օծուրիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կարողիկոսէն.

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ա. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կարողիկոսէն.

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Բ. Մուրաֆեան Սրբազն Պատրիարքէն.

- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոսոնի Եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալեքսէ Բ. Սրբազն Պատրիարքէն.

- Լիզանի Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Մարքին Եսայեանէն.

- Թեմակալ Առաջնորդներէն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց դեկապարներէն:

ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ՄԱՅ ԱԹ-ՈՒ Մ. ԷՉՄԻԱՅԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 365

Սուրբ Զատիկ, 2008 թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ

Տ. ԹՈՐԳՈՒ ԱՐԵՊԻԿՈՎՈՒՄ ՄԱՍՈՒԿՅԱՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ
Երուսաղեմ, Խրայն

Ամենապատիվ Մրգազան Պատրիարք,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր Եղայրական սերն ենք բերում և շնորհավորում Ձեզ
և Երուսաղեմի Յայոց Պատրիարքության ուխտյալ միաբանությանը մեր Տեր Յիսուս Քրիստոսի
Դրաշափառ Յարության տոնի բերկրալի առիթով:

«Յարութիւն է առել Քրիստոս՝ ննջեցեալների առաջին պտուղը» (Ա Կորնթ. 15.20):

Կենարար այս ավետիսով կրկին վերապրում ենք Տիրոց Յարության հաղթական խորհուրդը՝
հաղորդակից յուղաբեր կանանց և առաջաների խնդությանն ու ուրախությանը: Յարությունը
Քրիստոսսաեր հոգիներին պարգևում է գորություն ու խզախություն՝ կյանքով ու գործով առ
բարձրոյալ Աստված հավատքը վկայելու, ինչպես սուրբ առաջալները աստվածսիրությամբ
ու քաջակղությամբ գոտեպնդված՝ աշխարհում սփոթեցին Ավետարանի լույսը կենսատու:

Գոհություն Յարուցյալ Փրկչին, որ քաջարի նույն ոգով և Յարության հաղթանակի
աներկրա հավատքով դարերի հոլովուրում բարեպաշտ մեր ժողովուրդը հաղթահարել է իր
առջև ծառացած մարտահրավերները՝ սերունդներին փոխանցելով առաջընթաց նոր կյանք
կերտելու ազնիվ ծգությօն, անմար պահելով Լուսավորչի հավատը կանքելը մշտավառ: Այսօր
ազգս հայոց նորոգ հաջողություններ է հավելում իր փառավոր պատմության նորագույն
էջերին: Աշխարհասփյուռ Մեր զավակների նվիրական ջանքերով զարգացում է ապրում
անկախ մեր Յայրենիքը, հզորանում Յայրենի պետականությունը և բազմարդյուն
ծեղծերումներով արգասավորվում են Հայաստան-Սփյուռ հարաբերությունները: Աստօն
օրինությամբ և հավատավոր բազում հայորեների աջակցությամբ եկեղեցաշեն ու ազգօգուտ
ծեղնարկներով բարեզարդվում է ազգային-եկեղեցական մեր կյանքի անդաստանը՝ ի խնդիր
համայն հայության հոգևոր վերազարդումից, հայոց բարօր և լուսաշող ապագայի:

Զայտկական հուսառատ այս օրերին վերստին աղոթում ենք, որ Աստված
խաղաղության մեջ անվրդով ու հաստատո: Ծ պատի հայրենի մեր Եղիկերը, զօրացնի
Եղբայրսիրությունն ու քրիստոսապատճեր սիրո ոգին ազգիս հայոց: Յայցում ենք, որ Տիրոց
ողորությամբ իրականություն դառնա խաղաղության վերահաստատման արդար իդը
Մերձավոր Արևելքի տարածաշրջանում և պատերազմական իրավիճակներով խոռվահույզ
երկրներում ապրող ժողովուրդների:

Թող Յարուցյալ Աստված իր զորակցությամբ հաջողություններ պարգևի Ձեզ՝
շնորհելով քաջառողջություն և հարանորոգ ծեղծերումներ Ձեր բարձր առաքելության մեջ՝ ի
պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, ի շինություն Երուսաղեմի Յայոց
Պատրիարքության:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի

Եղայրական սիրո ողջունիվ,
աղոթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Digitised by A.R.A.R. @



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՐԼԻԿՐՈՅ

ԱՌԹԻՒՐԱՍ - ՀԻՌԱՍԱՆ

56/OS
Քը:

Ա. Զատիկ. 2008
Անձինաս,

Ա. Ամենապատիսի
Տ. Թորգոմ Արմենակ. Մանուկյան
Հայ Պատրիարք Երուսաղեմի
Երանակը

Միքեցեալ Նովայր ի Քրիստոս,

Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնիք առիթով, Մեծի Տանն Կիլիկիայ Կարողիկոսութեան Անքիլիասի Մայրավանքէն եղբայրական շերմ սիրով կ'ողջունեն Ձեզ եւ Երուսաղեմի Սրբոց Յակոբանց ուխտեալ միաբանութիւնը:

Քրիստոսի յարութիւնը ո՞չ միայն գազաբնակետն է իր երկրաւոր առամելութեան, այլ նաև իր բոլոր ուսուցումներուն ու հրաշագործութիւններուն առանցքը Խանդիսացած Փրկութեան պարգեւն է արուած մարգուն: Արդարեւ, մահաւոն վրայ տարած իր յաղթանակով Աստուծոյ Որդին մարդուն առչեւ քացաւ Փրկութեան առաջնորդող ճանապարհը: Հաւատարմօրէն հևտեւիլ Քրիստոսի, կը նշանակ Փրկութեան ճանապարհին ուխտաւոր դառնան:

Դիւրին չէ այս ճանապարհը: Վկայ՝ Քրիստոսը իր կեանքին գերագոյն Առաջնորդը բնուրած մեր մողովուրդի պատմութիւնը: Մեր մողովուրդը նոյնիսկ իր արեան վկայութեամբ հևտեւցաւ իր հրաշափառ յարութեամբ աշխարհին կեան ու Փրկութիւն պարգևած Քրիստոսին:

Ներկայ աշխարհը ու մեր ժողովուրդի կեանքին ներկայ պայմանները, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, կը մղեն մեր ժողովուրդի զաւակները հաւաքուելու մեր կեանքին մէջ յարութեան ջահը միշտ վեր պահած մեր եկեղեցւոյ շուրջ՝ վերանորոգելով իրենց կապուածութիւնը այն արժէքներուն ու նշանարտութիւններուն, որոնք առանցքը կը կազմեն քրիստոնեական հաւատքին:

Յարութեան խորհուրդով օծուն այս օրերուն կ'աղօքենք առ Յարուցեալ Փրկիչը, որ ամբացնէ մեր մողովուրդի միասնականութիւնը, զօրացնէ անոր հաւատելու առաջնորդելով զայն դլայի ինադադարին ու բարգաւանում:

Կ'աղօքենք առ Յարուցեալ Քրիստոս, որ Ձեզի պարգեւ առողջութեամբ ու յաջողութեամբ հարուստ երկար զահակալութիւն:

Աղջայրական սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթակից՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՐԼԻԿՐՈՅ



ՊԱՏՐԻԱՐքՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՑ
ՍՏԱՆԼԻԿՈՒԹՅՈՒՆ

ERMEŃİ
PATRİKLİĞİ
İSTANBUL

ARMENIAN
Patriarchate
ISTANBUL

ԱՐԵՎԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Զատիկ, 2008
8703

Ն.Ա.Ը. Թողգում Բ.
Պատրիարք Առաքելական Աթոռոյ
Սբ. Երուսաղեմ - Խորայէ

Ամենապատիւ Տեր.

«... այլ նաեւ կը պարծենանք Աստուծով՝ մեր Տեր Յիսուս Քրիստոսի միջոցով,
որով Եւ հաշտութիւնն իսկ ընդունեցինք» (Պուզմայեցիս 5.11):

Ամենաբարին Աստուած ցանկացած է, որ «հաշտութիւն» գոյանայ Իր Եւ մարդուն
միջեւ Եւ Իր անսահման ողորմութեամբ «հաշտարարութ որկած Եւ աշխարհ: Եւ ի
վերջոյ Աստուած, իմրեւ սիրով զեղուն գթառատ Դայր, «հաշտուած» Եւ մարդուն
հետ, ցնչելով անոր մեղքերը:

Քրիստոսի՝ մարմնացած Աստուծոյ Խօսքին ծնունդ Եւ յայտնութիւնը, Քրիստոսի
մատուցած անկրկնելի Սուրբ Պատարագը, Եւ հուսկ՝ Քրիստոսի մեռներեն յա-
րութիւնը Երեւ Եզակի դեպքեր Են տիեզերքի պատմութեան մեջ, որոնք Երեւ Խոր-
հուրդներ Են արդարեւ Եւ հիմքին՝ ճշխրտութիւններ, որոնց մեջեն Աստուած կը
խօսի. թէ Իր Եւ մարդոց միջեւ հաշտութիւն կը կամենար:

«Քրիստոսի հաշտարար դերը զմբռնել». Ահաւասիկ այս Եւ փափաքը Ս. Պողոս
Առաքեալի՝ կծնդանի, Տարուցեալ Քրիստոսը ճանչնալ Եւ անդրադառնալ Ասոր
հրաշափառ Տարութենքն բղխող հաշտարար գօրութեան:

Ս. Տարութեան Տօնին առթիւ անգամ մը Եւ կը Խորհրդածենք մեր մեղքերուն
փոխարեն ինքզինք Խաչին Վրայ գոհաբերող Քրիստոսի՝ մահուան, Եռորեայ թաղ-
ման Եւ հրաշափառ Ար Թարութեան Խորհուրդներուն Վրայ, Եւ Ս. Պողոս
Առաքեալին հետ միեւնոյն օրինեալ փափաքը կը կիսենք:

**ԵՐԻՍՏՈՆ ԵԱՐԵՎԱԿ ՄԵՌԵԼՈՅ
ՕՐԴՆԵԱԼ Ե ԵԱՐՈՒԹԵԻՆ ԵՐԻՍՏՈՆԻ**

Նոյն հաւատքով Եւ զատկական ուրախութեամբ, այսու մեր Եւ մեր ազգային
մարմիններուն շնորհաւորութիւններո կը յունք Ձեզի, Սորոց Ցակովրեանց Ուխտի
բոլոր միարան հայութեան Եւ Խորայէի, Պահեստինի Եւ Ցորդանանու մեր ժողո-
վուրդին, մաղթելով բոլորին տօնական ուրախութիւն, երջանկութիւն, խաղաղու-
թիւն, արեւատութիւն Եւ եկեղեցանուեր Եւ Աստուածահանոյ բոլոր գործերուն մեջ
լիակատար յաջողութիւն:

Ողջունիւ Եղբայրական սիրոյ Եւ
աղօթակցութեամբ ի Քրիստոս



ՄԵՍՐՈՂ ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՐԵՎԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅՈՒՆ



**Патриарх
Московский
и всея Руси**

119034 Москва, Чистый пер., 5

**ЕГО БЛАЖЕНСТВУ,
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА**

Ваше Блаженство!

Христос Воскресе!

В дни светлого Пасхального торжества мы прославляем Спасителя нашего Иисуса Христа, разрушившего смерть и явившего жизнь и нетление (2 Тим., 1, 10).

Жизнь современного мира ставит перед нами немало трудностей и вызовов. Во многих странах и регионах продолжаются кровопролитные конфликты, обостряется вражда между людьми. Не прекращаются попытки изгнать из жизни общества христианские ценности.

Но, как бы ни была сложна окружающая нас реальность, христиане призваны побеждать безверие "мира сего", преодолевать все беды и трудности, вдохновляясь Пасхальной радостью и словами Господа Иисуса Христа: *Мужайтесь: Я победил мир* (Ин. 16, 33).

От души поздравляя Вас с праздником Святой Пасхи, желаю радости, здоровья и помочи Божией во всех добрых делах.

С любовью о Христе Воскресшем

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Пасха Христова
2008 г.
Москва